ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Կրտսեր դպրոցականի աշխատանքային կարողությունների ձևավորումը

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ Ենոքյան Անահիտ Գուրգենի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Սյունիքի մարզի Ակների միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. Ռ. Բաղդասարյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3
2. Աշխատանքային դաստիարակության նպատակն ու խնդիրները տարրական դասարաններում…….5
3. Կրտսեր դպրոցականի աշխատանքային կարողությունների ձևավորման մեթոդներն ու միջոցները…….....10
4. Կրտսեր դպրոցականի աշխատանքային կարողությունների ձևավորումը արտադասարանային և արտադպրոցական պարապմունքներում……....…….……...14
2. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ……..…..……18
3. ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……...……19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դաստիարակության գործընթացն ունի շատ բարդ կառուցվածք: Նրա համակարգի յուրաքանչյուր բաղադրամաս իր հերթին կարող է հանդիսանալ առանձին համակարգ և ենթադրում է դաստիարակության նպատակի առկայություն, առաջադրված նպատակին հասնելու համար համապատասխան խնդիրների առաջադրում և լուծում, դաստիարակության բովանդակություն, նրա որևէ բաղադրամասի ուղղությամբ իրականացվող դաստիարակության համար մեթոդների, հնարների, միջոցների ճիշտ ընտրություն և ենթադրվող արդյունքներ, դաստիարակչական գործընթացի արդյունավետության վրա ազդող պայմաններ և այլն:

Այս առումով ավելի քան կարևորվում է աշխատանքային դաստիարակության դերը կրտսեր դպրոցականի անձնավորության դաստիարակման գործընթացում:

Աշխատասիրությունը բարոյական հատկանիշ է, այն համամարդկային արժեք է և աշխատանքային դաստիարակության արդյունք է համարվում: Սակայն աճող սերնդի վրա դաստիարակող ազդեցություն ունեցող գործոնները բազմաթիվ են և հակասական: Համացանցն, իր դրական իրողություններից զատ, դաստիարակում է սպառողի՝ կյանքի հաճույքներից միայն օգտվողի դիրքորոշում, ընտանիքները հաճախ սովորեցնում են նվազագույն ջանքերով կյանքից վերցնել ինչ հնարավոր է: Երեխաներն աչքի առջև ունեն տասնյակ մարդկանց օրինակներ, ովքեր ոչինչ չեն անում, սակայն ապրում են շքեղության մեջ: Ընկել է աշխատանքի սոցիալական վարկանիշն ու բարոյական արժեքը: Այս պայմաններում մանկավարժների և ծնողների համար մեծագույն խնդիր է ազնիվ աշխատանքի հեղինակության պահպանումը՝ որպես կայուն կենսական հաջողության գրավականի: Պետք է երեխաներին օգնել տարբերել և գերադասել կայունը ժամանակավորից, իսկ կայուն բարեկեցություն կարող է ապահովել միայն մշտական աշխատանքը և ազնիվ բարոյական դիրքորոշումը: Անհրաժեշտ է բերել հաջողակ գործարարների, արվեստագետների կամ արհեստավորների օրինակներ, ովքեր տքնաջան ու արդար աշխատանքի շնորհիվ ձեռք են բերել մեծ հեղինակություն և հասել են նյութական բարեկեցության:

Ժամանակի պահանջներին համապատասխան ուսուցիչները պետք է գտնվեն անընդհատ շարժման, որոնումների, մասնագիտական և առարկայական աճի ու զարգացման գործընթացի մեջ, հակառակ դեպքում չեն կարող աշխատել հասարակության մեջ կատարվող փոփոխություններին արագ արձագանքող և հարմարվող նոր սերնդի հետ:

Ավարտական աշխատանքի թեման արդիական է, քանի որ աշխատանքային դաստիարակության կարողությունների ձևավորումը անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման գործընթացի կարևորագույն բաղադրամասերից է:

Ավարտական աշխատանքի նպատակն է բացահայտել կրտսեր դպրոցականների աշխատանքային կարողությունների ձևավորման գործընթացի բովանդակությունը, առանձնահատկությունները, մեթոդներն ու միջոցները:

Ավարտական աշխատանքի խնդիրներն են՝

- Ուսումնասիրել աշխատանքային դաստիարակության բովանդակությունը, նպատակը, խնդիրները տարրական դպրոցում,
- Վերլուծել կրտսեր դպրոցականի աշխատանքային կարողությունների ձևավորման մեթոդներն ու միջոցները,
- բացահայտել կրտսեր դպրոցականի աշխատանքային կարողությունների ձևավորման առանձնահատկությունները արտադասարանային և արտադպրոցական պարապմունքներում:

Հետազոտության թեման ունի տեսական և գործնական ուսումնասիրության կարևորություն, քանի որ մատաղ սերնդի աշխատանքային կարողությունների ձևավորման նպատակային ուղիներն ու միջոցները կլրացնեն անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման համակարգը:

Աշխատանքային դաստիարակության նպատակն ու խնդիրները տարրական դասարաններում

Նախքան աշխատանքի հասարակական նշակությունը հասկանալը, տարրական դասարանում սովորող երեխան պետք է զգա, որ առանց աշխատանքի հնարավոր չէ ապրել, որ աշխատանքն է պարգևում հոգևոր կյանքի ուրախությունը, լիակատարությունը: Աշխատանքը երեխայի հոգևոր կյանքի մեջ պետք է մտնի դեռևս կրտսեր հասակում: Երեխային պետք է ցույց տալ աշխատանքի հասարակական և ստեղծագործական կարևորությունը, նրանց համոզել, որ նրանք մասնակցում են հասարակության համար նյութական արժեքներ ստեղծելուն:

Աշխատանքային դաստիարակությունն ամենից առաջ սիրո դաստիարակությունն է աշխատանքի նկատմամբ: Առանձնացնենք աշխատանքային դաստիարակության հետևյալ սկզբունքները.

1. Աշխատանքային դաստիարակության և ընդհանուր՝ բարոյական, մտավոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացման միասնությունը:
2. Աշխատանքը միայն այն ժամանակ է դառնում դաստիարակող ուժ, երբ անհատի և կոլեկտիվի ինտելեկտուալ կյանքը հարստացնում, ստեղծագործական հետաքրքրությունները հագեցնում է բազմակողմանի բովանդակությամբ:
3. Անհատականության բացահայտումը, հայտնաբերումը, զարգացումը աշխատաքնում:
4. Աշխատանքը կարող է դառնալ բերկրանքի աղբյուր միայն այն ժամանակ, երբ մարդը նրանում տեսնում է ինչ-որ նշանակալից բան, ավելին քան միջոցների ստացում նյութական պահանջմունքների բավարարման համար. հոգևոր ստեղծագործություն, իր ընդունակությունների, տաղանդի բացահայտում:

Աշխատանքի ընթացքում և նրա միջոցով մարդը դաստիարակվում է, կոփվում, ձեռք է բերում բարոյական բարձր հատկանիշներ: Աշխատանքի առաջին մղիչը համառությունն է, որը դաստիարակողը և դաստիարակվողը պետք է դարձնեն իրենց

վարքագծի գլխավոր հատկանիշներից մեկը: Աշխատանքային դաստիարակության նպատակներն են.

1. Դաստիարակության ընդհանուր համակարգի հետ միասին ապահովել աճող սերնդի համակողմանի և ներդաշնակ զարգացումը,
2. Յուրքանչյուր մարդու մեջ սեր ներարկել դեպի աշխատանքը, այնպես անել, որ աշխատասիրությունը վերածվի ամենօրա սովորույթի,
3. Սովորողներին ընտելացնել աշխատանքային կարգապահութանը և նրանց մեջ մշակել բարոյական բարձր որակներ,
4. Սովորողների մեջ ներարկել սեր ու հարգանք աշխատանքը գնահատող մարդկանց նկատմամբ[1]:

Տարրական դասարաններում երեխաների համակողմանի և ներդաշնակ զարգացման համակարգի ապահովման համար աշխատանքային դաստիարակությունը նոր բովանդակություն և իմաստ է ստանում: Այն հիմնված լինելով երեխաների ակտիվության և ինքնուրույնության վրա, ուղղված է աշխատանքի պահանջմունքի ձևավորմանը, աշխատասիրության դաստիարակմանը, որը չափազանց կարևոր է դպրոցում սովորելու համար: Աշխատանքային դաստիարակության խնդիրների ծրագրային բովանդակությունը որոշվում է երեխաների տարիքային առանձնահատկություններով, դպրոցական կրթությանը լավագույնս նախապատրաստելու պահանջով, վերջին հաշվով, դաստիարակությանը ներկայացվող արդի սոցիալական պետական պատվերով:

Աշխատանքային դաստիարակության խնդիրներն են'

1. աշխատանքի հանդեպ հարգանքի և գիտակից վերաբերմունքի ձևավորումը,
2. աշխատանքային գործունեության կառուցվածքային տարրերի ձևավորումը,
3. աշխատանքային կարողությունների և հմտությունների ձևավորումը,
4. աշխատելու պահանջմունքի զարգացումը,
5. բարոյակամային հատկությունների ձևավորումը աշխատանքի միջոցով,
6. աշխատասիրության դաստիարակությունը,

[1] Սահակյան Կ., Մանկավարժություն առարկայի ուսումնասիրման մեթոդական ցուցումներ և առաջադրանքներ, Երևան, 2008, էջ 147:

7. սոցիալական հատկությունների ձևավորումը աշխատանքի միջոցով,
8. աշխատանքային գործնական փոխհարաբերությունների ձևավորումը,
9. ցանկացած աշխատանքի արդյունքի հանդեպ կայուն հետաքրքրության ձևավորումը,
10. նյութական արժեքների ստեղծման նշանակության բացահայտումը:

Փորձառու մանկավարժական վարպետություն ունեցող ուսուցիչը մինչև նշված խնդիրների վերհանումը և լուծումը, կրտսեր դպրոցականի գիտակցությաննն է հասցնում, թե ինչպես է գոյանում հանապազօրյա հացը, որ ուտում ենք, հագուստը, որ հագնում ենք, կոշիկը, որ կրում ենք: Թե մետաղն ինչպես է դառնում գործիք, սարք, մեքենա, արբանյակ և այլն: Թե ինչ միջոցներով ու հնարաներով են ստեղծվում մարդուն անհրաժեշտ բոլոր իրերը: Աշխատելու պահանջմունքն այնպես պետք է ամրանա երեխայի մեջ, ինչպես ամրացնում են ցեմենտի, ջրի ու ավազի շաղախը և ապահովում կառուցի ամրությունն ու անսասանությունը[2]:

Աշխատանքային դաստիարակությունը կապված է դաստիարակության ընդհանուր համակարգի բոլոր բաղադրամասերի հետ: Օրինակ, այն կապ ունի բարոյական դաստիարակության հետ, աշխատանքի ինչ բնագավառ էլ ուսումնասիրելու լինենք, նրանում և նրա միջոցով ձևավորվում ու բարեփոխվում են սովորողների բարոյական որակները: Օրինակ՝ աշխատանքը ներգործում է դպրոցականների նպատակների, արժեքների դիրքորոշումների վրա, որոշակիորեն զարգացնում նրանց հետաքրքրությունները, իդեալները: Այնուհետև՝ համակարգված, կազմակերպված աշխատանքը նպաստում է սովորողների ընկերական հարաբերությունների զարգացմանը: Նրանց մեջ ներարկում է ազնվություն, բարություն, խղճի, հումանիզմի կազմակերպվածության տարրեր, բարոյական նորմերն հարազատ մնալու սովորույթ: Այսպիսով, աշխատանքային դաստիարակությունը մի կողմից դպրոցականների կողմից ձևավորում է բարոյական որակներ, իսկ մյուս կողմից՝ բարոյական դաստիարակությունից վերացնում է այն ամենը, ինչն անհրաժեշտ է աշխատող մարդուն:

[2]Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան, Մանկավարժություն, Երևան, 2005, էջ 134:

Մեծերի աշխատանքի մասին երեխաների պատկերացումները ձևավորվում են ինչպես աշխատանքի ընդհանուր ձևերի /շինարարություն, խոհարարություն և այլն/, այնպես էլ տվյալ տեղանքի համար առանձնահատուկ աշխատանքի տեսակներին և աշխատանքային գործիքներին ծանոթացնելու հիման վրա՝ կենցաղի, ազգային ավանդույթների յուրահատկությունների հաշվառմամբ:

Աշխատանքային դաստիարակության խնդիրներն իրականացնելիս ուսուցիչը երեխաներին հաղորդակից է դարձնում ազատ, ստեղծագործական աշխատանքին՝ որպես համամարդկային արժեքի, աշխատանք է տանում հաղթահարելու նեղ կենցաղային կողմնորոշումը երեխաների առարկայական-գործնական աշխատանքը կազմակերպելիս, կատարելագործելու երեխաներին այդ գործունեության մեջ ներգրավելու մեթոդներն ու մեծերի աշխատանքին ծանոթացնելու ձևերը, ընդլայնում է գործնական աշխատանքների շրջանակը՝ ջերմ հոգատարության և երեխաներին աշխատանքային բազմաբնույթ գործունեության ոլորտներում ներգրավեու միջոցով: Ուսուցիչը ձգտում է՝

1. երեխաների մեջ դաստիարակել աշխատելու ցանկություն և կարողություն,
2. ընդարձակել աշխատանքի բովանդակությունը՝ ապահովելով յուրաքանչյուրի մասնակցությունը կատարվող աշխատանքին, այդ իսկ նպատակով անհրաժեշտ է ամենայն հոգատարությամբ բավարարել մեծերի գործողություններն ընդօրինակելու երեխաների պահանջմունքները,
3. խթանել աշխատանքային ակտիվության ձևերը,
4. նպաստել առարկայական աշխատանքում սեփական կամքով իրերն ու գործիքներն օգտագործելու ընդունակությունների զարգացմանը,
5. ծանոթացնել աշխատանքի նպատակներին, դժվարություններին ու հաջողության հասնելու միջոցներին,
6. խթանել մեծերի հետ երեխաների համատեղ գործնական աշխատանքային գործունեությունը՝ մեծ տեղ հատկացնելով դերերով խաղերին, դժվարությունները հաղթահարելու ուղիներին և եղանակներին:

7. Աշխատանքային դաստիարակության ընթացքում իրականացնել տարբերակված մոտեցում երեխաների նկատմամբ՝ կախված նրանց սեռական պատկանելությունից:

Հաշվի առնելով տղաների և աղջիկների հետաքրքրությունները և ֆիզիկական կարողությունները՝ պետք է առանձին հանձնարարություններ տալ տղաներին և աղջիկներին, օրինակ՝ սպորտային և այլ գույքի խնամքը, ֆիզկուլտուրայի դահլիճում ցատկելու կանգնակները տեղաշարժելը հանձնարարել տղաներին, իսկ աղջիկներին՝ սենյակ մաքրելն ու զարդարելը, ծաղիկներ խնամելը, մաքրություն պահպանելը և այլն:

Աշխատանքի կազմակերպման հիմնական ձևերն են՝ հանձնարարություններ, հերթապահություն, ընդհանուր աշխատանքը, ինքնասպասարկումը, առարկայական - գործնական աշխատանքները, ձեռքի աշխատանքը:

Տարրական դասարաններում երեխաներին դաստիարակում է ոչ թե ինքը՝ աշխատանքը, այլ երեխայի և չափահասի գործնական շփումը, հաղորդակցումը: Աշխատանքի արդյունքը կարևոր է երեխաների համար, որովհետև դրա մեջ նրանք ներդնում են ֆիզիկական, մտավոր և կամային ջանքեր: Ինչպես աշխատանքային դաստիարակության փորձն է ցույց տալիս, պրակտիկայում յուրացված չի դաստիարակների կողմից երեխաների աշխատանքային գործունեության կազմակերպման մեթոդիկան, ինչպես ցույց է տվել փորձը: Ճիշտ է, ուսուցիչները կարողանում են կազմակերպել աշխատանք-դասապրոցեսը, բացատրել առաջադրանքը, հաճախ՝ առանձնացնել հրահանգները, սակայն կորչում է ամենագլխավորը՝ մեծի և երեխայի միջև եղած համաստեղծագործությունը, համագործակցությունը: Չկա այն շփումը, որ էմոցիոնալ աջակցություն է տալիս երեխային, խթանում ջանքերի գործադրմանը, հետևաբար աշխատանքային դաստիարակության մեթոդիկան պահանջում է այլ շեշտադրում:

Հաճախ, երեխայի հանդեպ դաստիարակի և նույնիսկ կոլեկտիվի անզորության պատճառը թաքնված է ոչ թե այն բանում, որ այդ սանը անուղղելի է, այլ նրանում, որ դաստիարակության գործընթացը կեղծ ճանապարհով է գնում, դաստիարակը ձգտում է միան արմատախիլ անել արատները, լավագույն դեպքում կանխել դրանց առաջացումը: Փորձը ցույց է տալիս, որ այդ ճանապարհով չի կարելի դաստիարակել կայուն

բարոյական համոզմունքներ: Դպրոցում գտնվելու առաջին օրվանից ուսուցիչը պետք է կարողանա տեսնել և անդուլ կերպով զարգացնել, ամրացնել երեխայի մեջ եղած ամեն լավը:

Կրտսեր դպրոցականի աշխատանքային կարողությունների ձևավորման մեթոդներն ու միջոցները

Դաստիարակության բովանդակությունը, նրա բաղադրամասերը իրականացվում են համապատասխան մեթոդներով: Աշխատանքային դաստիարակության բաղադրամասերը և մեթոդները փոխադարձ կախվածություն ունեն: Ավելին, աշխատանքային դաստիարակության գործընթացի բոլոր բաղադրամասերի միջև ևս կան և՛ կապեր, և՛ կախումներ: Դաստիարակողը, դաստիարակության մեթոդները, հնարները կիրառում է տարբեր ձևերով: Դրանց ընտրությունը և կիրառումը պայմանավորված են դաստիարակողի վարպետությամբ, ստեղծված իրավիճակով և սովորողների տարիքային ու անհատական առանձնահատկություններով: Աշխատանքային դաստիարակության գործընթացում այս կամ այն մեթոդի ընտրությունը և կիրառումը կախում ունեն դաստիարակության բաղադրամասի (օրինակ՝ մտավոր, բարոյական դաստիարակության և այլն) նպատակից, խնդիրներից, տվյալ դեպքում այն բաղադրամասից, որից իրականացվում է դաստիարակությունը, իսկ բաղադրամասն էլ կախում ունի կիրառվող մեթոդներից, հնարներից ու միջոցներից, իսկ դրանք բոլորը՝ դաստիարակությունն իրագործող դաստիարակից ու դրա (դաստիարակության) համար ստեղծված պայմաններից:

Ճիշտ չի միայն մեկ կամ երկու մեթոդով իրականացնել աշխատանքային դաստիարակության այս կամ այն բաղադրամասը հատկապես տարրական դասարանների աշակերտների համար: Այդ պատճառով, ցանկացած բաղադրամասից դաստիարակության իրականացումը ենթադրում է մի շարք մեթոդների կամ մեթոդների խմբերի զուգակցված գործադրում:

Աշխատանքային դաստիարակության տեսությունում առկա են դաստիարակության մեթոդների տարբեր դասակարգումներ: Ժամանակակից դպրոցում կիրառվում են դասակարգված մեթոդներից հետևյալ խմբերը.

1. Անձի գիտակցության ձևավորման մեթոդներ,
2. Անձի գործունեության ու հասարակական վարքի փորձի կազմակերպման և ձևավորման մեթոդներ,
3. Անձի վարքի ու գործունեության խթանման մեթոդներ[3]:

Հաշվի առնելով, որ ուսումնական աշխատանքը համարվում է երեխաների աշխատանքային գործունեության տեսակներից ամենաբարդը, այն պահանջում է մեծ կամային ջանքեր, երկարատև կենտրոնացում, համբերատարություն, համառություն և նպատակասլացություն, այն կազմակերպելու առաջնային պայմաններից է, աշակերտներին աշխատելու կարողություններ սովորեցնելը, ինչը կատարվում է աշխատանքաին դաստիարակության միջոցով: Աշխատանքային դաստիարակությունը տարրական դասարաններում անհրաժեշտ է իրականացնել բոլոր դասաժամերին: Այս խնդիրը պետք է լուծել թե՛ մայրենիի և մաթեմատիկայի, թե՛ կերպարվեստի և թե՛ տեխնոլոգիայի դասերին: Յուրաքանչյուր դաս պետք է կառուցել որպես աշխատանքի ուսուցման դաս՝ ձևավորելով և զարգացնելով ուսումնական աշխատանքի հմտությունները:

Ուսուցիչը պետք է կարողանա երեխայի աշխատանքային գործունեությունը, նրա հետաքրքրությունը աշխատանքի նկատմամբ ամրապնդել, երեխայի մեջ ստեղծել էմոցիոնալ -դրական տրամադրություն՝ աշխատանքային գործունեության նկատմամբ:

Աշխատանքային դաստիարակության կարևորագույն խնդիրներից է դառնում դասագործընթացում տարբեր նյութերով բազմազան առարկաների պատրաստումը, այսինքն՝ կատարել ձեռքի աշխատանք: Ձեռքի աշխատանքը կազմակերպվում է ինքնուրույն գործունեությանը հատկացված ժամերին՝ աշխատանքի ուսուցման կամ էլ տեխնոլոգիաի ժամերին, երեխաների ցանկությամբ, անհատական կարգով, ոչ մեծ

[3] Ս. Վարդումյան, Ա. Սարգսյան, *Ձեռնարկ ուսուցչի պատրաստման համար, Երևան,* 2004, էջ 19:

խմբերով, հաշվի առնելով յուրաքանչյուրի հետաքրքրությունները և ունակությունները: Ձեռքի աշխատանքը կատարվում է՝

1.Կտորով, թելով (դեկորատիվ ապլիկացիա-կտորից) հյուսք, մանվածագործություն, տիկնիկի զգեստավորման և սպասքավորման առարկաների, հուշանվերների ստեղծում:

2. Բնական նյութերով (մանր ու մեծ քանդակներ) դեկորատիվ կոմպոզիցիաներ' չորացած բույսերից, ծղոտից, հյուսք' ճկվող ճյուղերից, չոր խոտերից, կենդանի անկյան ձևավորում:

3. Ապլիկացիա' թղթով և ստվարաթղթով, տարբեր տեսակի թղթերով ու կտորով, բուսական նյութերի համադրությամբ և այլն:

4. Փայտով և փայտյա խաղալիքների ստեղծում, հուշանվերների հավաքում, մանր քանդակների, տիկնիկների կահույքի և կենցաղային մանր առարկաների պատրաստում'բնական նյութերի օգտագործմամբ:

5. Կավով դեկորատիվ նյութերի նախշազարդերի ստեղծում, խաղալիք - հուշանվերներ, տիկնիկի սպասք: Արհեստական նյութերով , մանվածքից, դեկորատիվ ժապավեններից, սինթետիկ նյութերից դեկորատիվ զարդեր, կենցաղային առարկաներ, խաղալիքներ, հուշանվերներ:

Յուրաքանչյուր աշակերտ պետք է ինքնուրույն ձգտում դրսևորի իր նպատակին հասնելու համար և դա պետք է ուղեկցվի ուսուցիչների և ծնողների կողմից: Տարրական դասարաններում մենք գործ ունենք դեռևս չձևավորված անհատի հետ, որն չունի հստակ պատկերացումներ իր ապագա անելիքների մասին: Այս է պատճառը, որ ամեն ինչ արվում է, որպեսզի կրտսեր դպրոցականը դասաժամերին և զանազան խմբակներում աշխատում է դպրոցում, աշխատում է տանը, արտադպրոցական խմբակներում, նա նաև ֆիզիկական աշխատանք է կատարում: Ցավոք, ներկայիս աշակերտի առօրյան բավականին տարբերվում է նախորդ տարիների աշակերտների ամենօրյա զբաղվածությունից: Նրանք իրենց աշխատանքը կատարում են համակարգիչների և պլանշետների առջև՝ մոռանալով հանրօգուտ աշխատանքների մասին:

Ինչպես նշվեց, աշխատանքային դաստիարակության արդյունավետ իրականացման համար կարևոր են ընտրված մեթոդներն ու հնարները, ադպիսիք կարող են լինել օրինակ՝ տարատեսակ խմբակների կազմակերպումը դպրոցներում: Անհրաժեշտ է տարրական դասարանի աշակերտին ուղղորդել, այլ ոչ պարտադրել ճիշտ աշխատանք ընտրելու համար, գիտակցաբար մոտենալ ապագա սերնդի նախասիրություններին և բարդույթներին հասկանալով, որ կյանք ենք ուղեկցում մեր ազգի զավակներին: Նրանց գործունեությունը պետք է ունենա հասարակական նշանակություն. երեխաների աշխատանքի արդյունքները պետք է շրջապատի համար պիտանի, կիրառելի լինեն:

Կարծում ենք՝ կրտսեր դպրոցականների աշխատանքային դաստիարակությանն առավելագույն ուշադրություն դարձվում է տեխնոլոգիայի դասաժամերեն, երբ աղջիկներն ու տղաները առանձին խմբերով սովորում են իրենց տարիքային և սեռային առանձնահատկություններին համապատասխան աշխատանք կատարելու սկզբունքները, որոնք իրենց հետագա ամբողջ կյանքի համար կարող են ըստ անհրաժեշտության կիրառել:

Աշխատանքային դաստիարակությունը, բխելով ընդհանուր և ազգային յուրահատկությունները հաշվի առնելու պահանջից, իր խնդիրներն իրականացնելիս երեխաներին հաղորդակից է դարձնում ազատ, ստեղծագործական աշխատանքին, նրանց համար կազմակերպում է առարկայական գործնական աշխատանք:

Կրտսեր դպրոցականի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, դեռևս պահպանվում է *խաղալու պահանջմունքը*: Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային էլեմենտների առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ: Մեծ է նաև *շարժվելու պահանջմունքը*, հետևաբար, ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառի շարժողական խաղեր, որոնք նպաստում են երեխայի ուշադրության զարգացմանը, կենտրանանալու կարողությանը: Ուսուցիչը նաև կարող է հմտորեն կազմակերպել երեխաների հանգիստը՝ ներառելով խաղեր և շարժողական

վարժություններ, որոնց ընթացքում երեխան լիցքաթափվում է և կարողանում արդյունավետ շարունակել ուսումը[4]:

Կրթական ծրագրում նշված են աշխատանքի առանձին տեսակներ, որոնք ենթադրում են աշխատանքային դաստիարակությունն իրականացնել երեխաների նկատմամբ անհատական մոտեցում՝ հաշվի առնելով նրանց սեռը, տարիքային և անհատական առանձնահատկությունները, հետաքրքրությունները և ֆիզիկական կարողությունները:

Աշխատանքային դաստիարակության հաջողությունն ապահովելու նպատակով պետք է համագործակցված աշխատանք տանել ընտանիքի հետ և օգտագործելով ընտանիքի դաստիարակչական ներուժը, հատուկ ուշադրություն դարձնել ծնողների և երեխաների միջև աշխատանքային համագործակցություն հաստատելուն: Աշխատանքային դաստիարակության համար ընտանիքը շատ բարենպաստ պայմաններ և խթաններ ունի: Ընտանիքում կան բազմաբնույթ աշխատանքներ կատարելու հնարավորություն և ավելի շատ ժամանակ:

Ուսումնաաշխատանքային վարժություններն աշակերտների գործնական աշխատանքներից են, որոնք արտադրական-աշխատանքային ուղղվածություն ունեն: Այս վարժությունների նպատակը աշակերտների տեսական գիտելիքները աշխատանքային գործունեության մեջ կիրառելն է: Դրանք նպաստում են աշակերտների աշխատանքային դաստիարակության ամրապնդմանը: Արդյունավետ են նաև խնդրահարույց-որոնողական վարժությունները, որոնք աշակերտների մեջ ձևավորում են ստեղծագործական կարողություններ, ներըմբռնում:

Կրտսեր դպրոցականի աշխատանքային կարողությունների ձևավորումը արտադասարանային և արտադպրոցական պարապմունքներում

Արտադասարանական աշխատանքները, լինելով դասագործընթացի օրգանական շարունակությունը, նպաստում են սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման, գիտելիքների խորացմանն ու հարստացմանը: Այդ տեսանկյունով էլ սխալ կլիներ ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումը

[4] Յու. Ամիրջանյան, Ա. Բալայան, Զրույցներ սկսնակ ուսուցչի հետ, Երևան, 1983, էջ 49:

սահմանափակել միայն ուսումնական աշխատանքի շրջանակներում, չէ որ դպրոցականի հարցասիրությունը, հետաքրքրությունն իր արտահայտությունն է գտնում նրա ամբողջ գործունեության բազմազան տեսակներում: Քանի որ արտադասարանական աշխատանքի բազմապիսի ձևերի օգտագործումը հնարավորություն է տալիս ուսուցիչներին ապահովելու դաստիարակության և ուսուցման փոխներգործությունը, որի շնորհիվ տեղի է ունենում անձնավորության զարգացումը ու ճանաչողական հետաքրքրության ձևավորումը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առաջավոր ուսուցիչների որոնող ստեղծագործ միտքը զբաղված է նրանով, թե ինչպես հաղթահարել տարրական դասարանների սովորողների հետաքրքրությունն ուսման նկատմամբ, ինչպես կազմակերպել ուսուցման գործընթացը, որպեսզի աշակերտը ոչ միայն ընկալի հաղորդվող գիտելիքները, այլև սովորի խորհել, դատել, վերլուծել և ինքնուրույն հետևություններ կատարել: Ուստի, ուսուցիչների ստեղծագործական որոնումները պետք է ուղղված լինեն այն բանին, որպեսզի այդ նպատակի համար օգտագործվի սովորողների թե՛ ուսումնական և թե՛ արտադասարանական գործունեությունների միասնությունը: Ինչպես ուսուցման գործընթացը, այնպես էլ սովորողների արտադասարանական գործունեությունը պետք է առավելագույն չափով հագեցված լինի այնպիսի բազմաբնույթ ինքնուրույն ստեղծագործական աշխատանքներով, որոնք սովորողներին հրահրեն գիտելիքներով գործառնելու և որոնելու դրված նպատակի իրագործման նոր, ավելի կատարելագործված ուղիներ, որոնք զարգացնում են նրանց ոչ միայն մտածողական ակտիվությունը, այլև կամային ջանքերը: Այսպիսով, արտադասարանական աշխատանքի արդյունավետ պլանավորումն ու կազմակերպումը հնարավորություն է տալիս ուսուցչին ավելի պարզ կերպով տեսնել և ուսումնասիրել սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ուղղությունը, խորությունն ու կայունությունը և նպատակասլաց կերպով զարգացնել դրանք:

Սովորողների ճանաչողական ունակությունները պետք է զարգանան այնպես, որ նրանք ոչ միայն կարողանան ճանաչել իրականությունը, այլև որոշակի նորություն մտցնեն իրականության մասին եղած ըմբռնումների, հասկացությունների մեջ: Ստեղծագործական աշխատանքը սովորողից պահանջում է խոր ու կայուն գիտելիքներ,

հոգևոր ուժերի լարում, ստացած գիտելիքները կյանքում կիրառելու ունակություններ, ակտիվ ուշադրություն և դժվարությունները հաղթահարելու մեծ կամք: Այսպիսով արտադասարանական աշխատանքի տարածված ձևը առարկայական խմբակներն են, որը նպաստում է սովորողների ինքնուրույն մտավոր գործունեության զարգացմանը, գիտության նկատմամբ հետաքրքրությունների ձևավորմանը: Խմբակի պարապմունքների ընթացքում աշակերտները ձեռք են բերում ինքնուրույն փորձեր դնելու, դիտումներ կատարելու հմտություններ: Օրինակ, կրտսեր դպրոցականները արտադասարանական խմբակում աճեցնում են գյուղատնտեսական բույսեր, խնամում կենդանիներ, պայքարում բույսերի վնասատուների դեմ և ուշադրություն դարձնում կենդանիների կենսաբանական առանձնահատկությունների, կյանքի օրինաչափություններին, բնության պահպանության միջոցառումներին և այլն: Դրանով դպրոցը լուծում է իր առջև դրված գոյապահպանական, բնապահպանական, աշխատանքային դաստիարակության խնդիրները: Արտադասարանական նման ինքնուրույն աշխատանքներ կատարելիս ակտիվանում է աշակերտների մտածողությունը և ձևավորվում են աշխատանքային կարողություններ:

Աշխատանքային դաստիարակությունը կրտսեր դպրոցականների մոտ ավելի լավ ամրապնդելու լավագույն միջոցը դրանցում ծնողների մասնակցության ապահովումն է: Հենց այս նպատակով ծնողներին պետք է բացատրել երեխաների կողմից դպրոցում ձեռք բերած ինքնասպասարկման հմտություններն ընտանիքում ամրապնդելու կարևորությունը, նրանց տնտեսական-կենցաղային աշխատանքի, այդ թվում՝ գյուղական վայրերում տնային կենդանիներին խնամելու, պարտեզում և բանջարանոցում կատարվող աշխատանքներին ներգրավելու անհրաժեշտությունը: Ծնողներին խորհուրդ տալ՝ երեխաների միջև բաշխել հանձնարարությունները՝ հաշվի առնելով տարիքն ու սեռը, հատուկ ուշադրություն դարձնել հոր և որդու, մոր և դստեր միջև աշխատանքային համագործակցություն և բավարար հաղորդակցում հաստատելուն: Հայրերին խորհուրդ տալ՝ տղաներին մասնակից դարձնել վերանորոգման, ատաղձագործական և փականագործական աշխատանքներին: Մայրերին խորհուրդ տալ՝ աղջիկներին ներգրավել բնակարանի մաքրման, հարդարման, ուտելիքի պատրաստման, սպիտակեղենի լվացման (թույլ տալ

ինքնուրույն լվանալ ժապավենները, թաշկինակները, գուլպաները) և արդուկված սպիտակեղենը գեղեցիկ դասավորելու աշխատանքներին: Այսպիսով՝ ձևավորված աշխատանքային կարողությունը դրականորեն է անդրադառնում երեխայի ընդհանուր զարգացմանը, նպաստելով հուզական և իմացական ոլորտի, բարոյական և կամային հատկությունների ձևավորմանը, երեխայի ինքնահաստատմանը և ինքնազնահատմանը:

Արտադասարանական ու արտադպրոցական պարապմունքների ժամանակ կրտսեր դպրոցականների կարելի է նաև ծանոթացնել բնությանը և նրանց մեջ դաստիրակել պատասխանատվություն շրջակա միջավարի նկատմամբ: Դաստիարակել հոգատար վերաբերմունք բույսերի և կենդանիների նկատմամբ, սովորեցնել ինքնուրույն ջրել սենյակի բույսերը, փխրեցնել հողը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավարտելով ավարտական աշխատանքը՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

- Դաստիարակության բոլոր տեսակները փոխազդեցության մեջ են, ուստի կրտսեր դպրոցականների աշխատանքային դաստիարակությունն անհրաժեշտ է իրականացնել բարոյական, գեղագիտական, քաղաքացիական, իրավական, տնտեսագիտական, էկոլոգիական, ֆիզիկական դաստիարակությունների հետ միաժամանակ, ինչը կնպաստի անձի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը:
- Կրտսեր դպրոցականի աշխատանքային կարողությունների ձևավորման համար անհրաժեշտ է հաշվի առնել նրա անհատական, տարիքային առանձնահատկությունները:
- Աշխատանքային դաստիարակության արդյունավետ իրականացման համար կարևոր են ընտրված մեթոդներն ու միջոցները:
- Կրտսեր դպրոցականի աշխատանքային կարողությունները ձևավորվում են ինչպես ուսուցման գործընթացում տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքների ժամանակ, այնպես էլ արտադասարանային և արտադպրոցական պարապմունքների ժամանակ:
- Դպրոցականների աշխատանքային դաստիարակությունն իրագործվում է դպրոցի, ընտանիքի և հասարակության դաստիարակչական ջանքերի միասնության պայմաններում:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու., Բալայան Ա., Ջրույցներ սկսնակ ուսուցչի հետ, Երևան, 1983, «Լույս», 118 էջ:
2. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Երևան, 2005, Մանկավարժ, 455 էջ:
3. Սահակյան Կ., Մանկավարժություն առարկաի ուսումնասիրման մեթոդական ցուցումներ և առաջադրանքներ, Երևան, 2008, 197 էջ:
4. Վարդումյան Ս., Սարգսյան Ա., Ձեռնարկ ուսուցչի պատրաստման համար, Երևան , «Նոյյան Տապան Այոեքս», 2004, 198 էջ: